# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԼՄԼԲՀ-ՄԱԱՊՁԲ-25/07

գ. Լոռի Բերդ «18» փետրվարի 2025թ.

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Հայկ և Սերգեյ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սուրեն Զիլավյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված կենցաղային ապրանքները (այսուհետ՝ ապրանք)՝ Գնորդի կողմից ներկայացված պահանջագրերի հիման վրա, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը::

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

### 2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, Գնորդի կողմից ներկայացված պահանջագրերի ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, Գնորդի կողմից ներկայացված պահանջագրերի ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով՝ Գնորդի կողմից ներկայացված պահանջագրերի հիման վրա:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով և Գնորդի կողմից ներկայացված պահանջագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի **առավելագույն գինը** կազմում է **981.150 (ինը հարյուր ութսունմեկ հազար հարյուր հիսուն)** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պլրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագ... հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնությա... Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

8.4 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը:

8.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

8.6 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.9 Պայմանագիրը կազմված է 4էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Լոռի Բերդի համայնքապետարան | «Հայկ և Սերգեյ» ՍՊԸ |
| ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ 7 | ՀՀ Լոռու մարզ, ք.Ստեփանավան |
| ՀՀ 900252144028 | Աշոտ Երկաթի 10 |
| ՀՀ ՖՆ թիվ 1 գործառն. վարչություն | ՀՀ 220245590280000 |
| ՀՎՀՀ 06954163 | ԱԿԲԱ ԲԱՆԿ |
| | ՀՎՀՀ 06974805 |
| ---------------------------------Ա. Ներսիսյան | ----------------------------Ս.Զիլավյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
«18» փետրվարի 2025թ. կնքված
թիվ ԼՄԼԲՀ-ՄԱԱՊՁԲ- 25/07 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ապրանքների անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | **առավելագույն քանակը** | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | **ենթակա առավելագույն քանակը** | ժամկետը** |
| 1. | 18141100 | աշխատանքային ձեռնոցներ | Ընդհանուր նշանակության լատեքսային աշխատանքային ձեռնոցներ | զույգ | 250 | 20000 | 80 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 80 | 25.12.2025. |
| 2. | 18421140 | մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ | Պոլիէթլային ձեռնոցներ մեկանգամյա օգտագործման համար | զույգ | 50 | 4000 | 80 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 80 | 25.12.2025. |
| 3. | 19641000 | պոլիէթիլենային պարկ, աղբի համար | Տոպրակներ՝ կապվող, ստանդարտ չափի աղբամանների համար | հատ | 500 | 60000 | 120 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 120 | 25.12.2025. |
| 4. | 18421130 | Ռետինե ձեռնոցներ | Ռետինե ձեռնոցներ նախատեսված բազմակի օգտագործման համար, որոնք պաշտպանում են ձեռքերը մաքրող միջոցների ազդեցությունից | հատ | 220 | 22000 | 100 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 100 | 25.12.2025. |
| 5. | 19642000 | պոլիէթիլենային պարկ, սննդային | պոլիէթիլենային պարկ նախատեսված սննդի համար | հատ | 800 | 80000 | 100 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 100 | 25.12.2025. |
| 6. | 33761000 | Զուգարանի թուղթ | Գլանափաթեթի լայնությունը՝ 90-110 մմ, գլանված թղթի երկարությունը՝ 65մ | հատ | 90 | 72000 | 800 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 800 | 25.12.2025. |
| 7. | 33761300 | ձեռքի թղթե սրբիչներ | Ներծծվող փափուկ թղթով սրբիչներ՝ գլաված փաթեթով | հատ | 370 | 81400 | 220 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 220 | 25.12.2025. |
| 8. | 39513200 | Սեղանի թղթե անձեռոցիկ երկշերտ տուփով | Երկշերտ թղթե անձեռոցիկներ ստվարաթղթե գունավոր տուփերով | հատ | 300 | 42000 | 140 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 140 | 25.12.2025. |
| 9. | 39513200 | Անձեռոցիկ (սովորական) | Սեղանի փափուկ երկշերտ թղթյա 80X2 | հատ | 200 | 20000 | 100 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 100 | 25.12.2025. |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10. | 39514200 | Խոհանոցային սրբիչ | Բամբակյա սրբիչներ՝ նախատեսված ամանք սրբելու h[illegible]ար 40*60 չափի | հատ | [illegible] | 24750 | 45 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 45 | [illegible] |
| 11. | 39514500 | երեսսրբիչ | Բամբակյա խավոտ երեսսրբիչներ՝ 50*70 չափի | հատ | 1 200 | 42000 | 35 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 35 | 25.12.2025 |
| 12. | 39811100 | օդի թարմացուցիչներ | Օդի թարմացնող միջոց 250մլ | հատ | 1 100 | 55000 | 50 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.2025 |
| 13. | 39811300 | Հոտազերծիչ /դեզադոր/ օդի | Հոտազերծիչ նախատեսնած սան. Հանգույցի համար՝ 300մլ տարողությամբ աերոզոլային տարայով | հատ | 390 | 35100 | 90 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 90 | 25.12.2025 |
| 14. | 39812410 | Կահույքի փայլեցման միջոց | Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար, աերոզոլային փաթեթվածքով | հատ | 500 | 25000 | 50 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.2025 |
| 15. | 39812600 | Մաքրող միջոց (փոշի) | Մաքրող փոշի, բաղադրությունը՝5% ակտիվ անիոնիկլնյութ, ֆոսֆատ: | հատ | 340 | 17000 | 50 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.2025 |
| 16. | 39831241 | Օճառ ձեռքի | Ձեռքի օճառ՝ «Զեզոք» տեսակի Որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար)՝ ոչ պակաս 78 գ | հատ | 150 | 12000 | 80 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 80 | 25.12.2025 |
| 17. | 39831242 | լվացքի փոշի | լվացքի փոշի ձեռքով լվածքի համար 400 գրամանոց տուփերով | հատ | 160 | 800 | 50 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.202 |
| 18. | 39831244 | օճառ, տնտեսական | Բնական հումքից պատրաստված օճառ 72% խտությամբ, քաշը 150գ | հատ | 200 | 24000 | 120 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 120 | 25.12.202 |
| 19. | 39831246 | Հեղուկ օճառ | Մածուծիկ հեղուկ՝ հակաբակտերիալ հատկություններով,պլաստմասայե տուփով, քաշը 500մլ | հատ | 450 | 36000 | 80 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 80 | 25.12.202 |
| 20. | 39831247 | ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ) | Զուգարանակոնքի մաքրման միջոց, հեռացնում է ժանգը և նստվածքը, հանդիսանում է մանրեասպան, 1000մլ | հատ | 650 | 45500 | 70 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 70 | 25.12.202 |
| 21. | 39831260 | օճառի տարա | օճառի տարա պլաստմասայից , կափարիչով | հատ | 200 | 4000 | 20 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 20 | 25.12.202 |
| 22. | 39831273 | հատակի մաքրման նյութեր | հատակի մաքրման հեղուկ՝1 լիտրանոց տարայով | հատ | 900 | 45000 | 50 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.202 |
| 23. | 39831279 | հակափոշային արտադրանք | հակափոշային հեղուկ՝ հեղուկացիր տարայով | հատ | 1500 | 45000 | 30 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 30 | 25.12.202 |
| 24. | 39831280 | Ապակի մաքրելու հեղուկ | Մաքրող միջոց ապակե մակերևույթի համար, փոշեցրիչով 500մլ | հատ | 390 | 19500 | 50 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 50 | 25.12.202 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 25. | 39831281 | Ապակու մաքրման լաթ | Ապակու մաքրման լաթ միկրոզային 40*40սմ չափերի [illegible] աստեսված ապակիների և հայելիների չոր և խոնավ մաքրման համար | հատ | 350 | 24500 | 70 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 70 | . |
| 26. | 39831282 | կահույք մաքրելու լաթ | կահույք մաքրելու լաթ թավշյա կտորով 40*40սմ չափերի | հատ | 400 | 36000 | 90 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 90 | 25.12.2025թ. |
| 27. | 39831283 | Հատակ մաքրելու լաթ | Հատակ մաքրելու լաթ 50*80սմ- ցանկացած տեսակի հատակների մաքրման համար, ինչպես մաքրող նյութերով այնպես էլ առանց դրանց | հատ | 400 | 24000 | 60 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 60 | 25.12.2025թ. |
| 28. | 39835000 | Հատակի փայտ դույլով | Հատակը մաքրող հավաքածու, դույլ՝ մզիչով, փայտը՝ խոզանակով | հատ | 4 400 | 13200 | 3 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 3 | 25.12.2025թ. |
| 29. | 39836000 | Ավել | բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ | հատ | 1100 | 22000 | 20 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 20 | 25.12.2025թ. |
| 30. | 39831210 | Սպասք լվանալու հեղուկ | Մածուծիկ հեղուկ պասք լվանալու համար 400 մլ տարայով | հատ | 370 | 22200 | 60 | գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7 | 60 | 25.12.2025թ. |
| 31. | | Ընդամենը | | | | 981150 | | | | |

<u>Ծանոթություն</u>: Հավելված N 1-ում նշված է առավելագույն քանակը և մատակարարումը կատարվելու է Գնորդի կողմից ներկայացված պահանջագրի հիման վրա: Գնորդի փաստացի կարիքներից ելնելով նախատեսնած քանակը ամբողջությամբ կարող է չպատվիրվել, և մինչև տարվա ավարտը չպակվիրված մասով պայմանագիրը կհամարվի լուծված: Պահանջագրի հիման վրա մատակարարված ապրանքի ընդհանուր գումարը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 80 %-ից

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Լոռի Բերդի համայնքապետարան | «Հայկ և Սերգեյ» ՍՊԸ |
| ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ 7 | ՀՀ Լոռու մարզ, ք.Ստեփանավան |
| ՀՀ 900252144028 | Աշոտ Երկաթի 10 |
| ՀՀ ՖՆ թիվ 1 գործառն. վարչություն | ՀՀ 220245590280000 |
| ՀՎՀՀ 06954163 | ԱԿԲԱ ԲԱՆԿ |
| | ՀՎՀՀ 06974805 |
| ---------------------------Ա. Ներսիսյան | ---------------------------Ս.Ջիլավյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
«18» փետրվարի 2025թ. կնքված
թիվ ԼՄԼԲՀ-ՄԱԱՊՁԲ- 25/07 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Համարը | Ապրանքների անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | Կենցաղային ապրանքներ | 0 | 0 | 200000 | 300000 | 300000 | 300000 | 650000 | 650000 | 650000 | 981150 | 981150 | 981150 | 981150 |

**ԳՆՈՐԴ**
Լոռի Բերդի համայնքապետարան
ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ 7
ՀՀ 900252144028
ՀՀ ՖՆ թիվ 1 գործառն. վարչություն
ՀՎՀՀ 06954163
------------------------------Ա. Ներսիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Հայկ և Սերգեյ» ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ, ք.Ստեփանավան
Աշոտ Երկաթի 10
ՀՀ 220245590280000
ԱԿԲԱ ԲԱՆԿ
ՀՎՀՀ 06974805
------------------------------Ս.Ջիլավյան
/ստորագրություն/
Կ.Տ